Medicare-ը ծածկում է COVID-19-ի պատվաստանյութը

Medicare-ը ծածկում է կորոնավիրուսային հիվանդություն 2019-ի (COVID-19) օրիգինալ պատվաստանյութը և թարմացված պատվաստանյութը՝ Ձեզ համար անվճար: Թարմացված պատվաստանյութն ուղղված է COVID-19 օրիգինալ վիրուսային շտամին և 2 Օմիկրոն տարբերակներին (BA.4/BA.5):

Դուք կարող եք թարմացված պատվաստանյութ ստանալ նույն COVID-19 արտադրողից, որից ստացել եք Ձեր օրիգինալ պատվաստումը, կամ ընտրել այն ստանալ այլ արտադրողից:

Եթե Դուք ստացել եք «Պֆայզեր» կամ «Մոդեռնա» COVID-19 պատվաստանյութ, կարող եք թարմացված պատվաստում ստանալ «Պֆայզեր» կամ «Մոդեռնա» COVID-19 պատվաստանյութերի շարքի երկրորդ չափաբաժնի ավարտից առնվազն 5 ամիս հետո: Եթե դուք ստացել եք «Ջոնսոն և Ջոնսոն» COVID-19 պատվաստանյութ, կարող եք թարմացված պատվաստում ստանալ Ձեր առաջին պատվաստումից առնվազն 2 ամիս հետո:

- Ձեզ հետ բերեք Ձեր Medicare -ի կարմրասպիտակակապույտ քարտը, նույնիսկ եթե Դուք գրանցված եք Medicare Advantage պլանում: Ձեր ծառայություն մատուցողին անհրաժեշտ կլինի Medicare-ի Ձեր համարը՝ Medicare-ին հաշիվ ներկայացնելու համար:
- Այցելեք Medicare.gov՝ Medicare-ի՝ COVID-19 պատվաստանյութի և այլ հարակից ծառայությունների ապահովագրական ծածկույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար:
- Այցելեք CDC.gov/coronavirus պատվաստանյութերի և այն քայլերի մասին տեղեկությունների համար, որոնք կարող եք ձեռնարկել՝ Ձեզ և մյուսներին COVID-19-ից պաշտպանելու համար:

This product was produced at U.S taxpayer expense.

CMS Product No. 12118-AR (Armenian)
October 2022